

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի հունիսի 2-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

Նիստին մասնակցում էին հետևյալ Շահառուների խորհրդի անդամները՝

Արթուր Սաքունց	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Արայիկ Հովհաննիսյան	«Հայաստանի ավագանիների սսոցիացիա» ՀԿ
Վեհանուշ Հովհաննիսյան	«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ
Կարեն Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
Աշոտ Ոսկանյան	«Ագրոգարագում» ՀԿ
Հրաչիկ Զավադյան	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամ
Վանիկ Սողոմոնյան	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ
Սեյրան Մարտիրոսյան	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ
Լևոն Բարսեղյան	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Հովհաննես Վարդապետյան	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա» ԻԱՄ (Վարդան Համբարձումյանի լիազոր ներկայացուցիչ)
Սամվել Սարգսյան	«Արարատ» ՋՕԸ (Վիլիկ Բարսեղյանի լիազոր ներկայացուցիչ)
Տոնական Ղազարյան	«Շենիկ» ՋՕԸ

Նիստից բացակայում էին.

Հակոբ Աբրահամյան	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ
Արամ Սուքիասյան	«Հայաստանի երիտասարդների ազգային խորհուրդ» ՀԿ
Վիլիկ Բարսեղյան	«Արարատ» ՋՕԸ
Վարդան Համբարձումյան	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա» ԻԱՄ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
Նազելի Վարդանյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, գլխավոր իրավախորհրդատու
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Նաիրա Ալթունյան	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Հայաստան

Նիստին ներկա էին նաև հետևյալ ՋԼՄ ներկայացուցիչները:

Նիստը նախագահելու համար առաջարկվեց ՇԽ անդամ Արայիկ Հովհաննիսյանի թեկնածությունը և հաստատվեց միաձայն: Նախագահողը դիտարկեց ներկայացված երկու լիազորագրերը և հաստատեց, որ դրանք լիարժեք են: Այնուհետև, նախագահողը ներկայացրեց օրակարգը և ՇԽ անդամներին առաջարկեց ներկայացնել իրենց դիտողությունները և առաջարկություններն օրակարգի վերաբերյալ, եթե կան այդպիսին: Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

N	Սկիզբը	Օրակարգի հարց
1.	15:00	<ul style="list-style-type: none"> <li>- Շահառուների խորհրդի անդամ Լ. Ավագյանի հրաժարականի ներկայացում</li> <li>- ՇԽ թափուր տեղի համալրում՝ համաձայն ՇԽ անդամների 2007թ. սեպտեմբերի 29-ի ընտրության արդյունքների</li> </ul>
2.	15:30	Կառավարման խորհրդի 5-րդ պատվիրակի համալրում և հաստատում
3.	16:30	Այլ հարցեր

Նիստի մասնակիցների կողմից ներկայացվեցին մի շարք առաջարկություններ՝ օրակարգի 3-րդ՝ այլ հարցերի շրջանակներում քննարկելու նպատակով: Համապատասխան առաջարկությունները և դրանց շուրջ իրականացված քվերակության արդյունքները ներկայացվում են ստորև՝

1. Կառավարությանը ՇԽ անունից պաշտոնական գրության ներկայացում՝ ԿԽ անդամ Կառավարության անդամների՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի հետ կապված շահերի բախման հնարավոր դեպքերը կանխարգելող փաստաթուղթ մշակելու առաջարկով՝ ՇԽ անդամ Ա. Սաքունց.

Քվեարկության արդյունքները՝ 11 - կողմ, 0 - դեմ և 1 – ձեռնպահ (Հ. Ջավադյան):

2. Կառավարման խորհրդի և Շահառուների խորհրդի երկկողմակի կապը և արդյունավետ համագործակցությունն ապահովելու նպատակով ԿԽ և ՇԽ անդամների պարբերական հանդիպումներ կազմակերպելու առաջարկությունը ՇԽ անդամ Կ. Նազարյանի կողմից.

Քվեարկության արդյունքները՝ առաջարկությունը հաստատվեց միաձայն:

3. ՇԽ-ի կողմից հանրությանը ներկայացվելիք հաշվետվության ներկայացման քննարկում՝ հրավիրյալ Ս. Մեդրակյանի առաջարկությամբ.

Քվեարկության արդյունքները՝ 3 - կողմ (Ա. Սաքունց, Լ. Բարսեղյան, Ս. Մարտիրոսյան), 0 - դեմ և 9 – ձեռնպահ:

4. Կարգապահական հարցերի քննարկում՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Հովսեփյանի առաջարկությամբ.

Քվեարկության արդյունքները՝ առաջարկությունը հաստատվեց միաձայն:

Այնուհետև, նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը՝ այլ հարցերում ընդգրկելով ձայների պարզ մեծամասնությամբ հաստատված առաջարկությունները: Օրակարգը հաստատվեց միաձայն:

### **Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ**

Նախագահողը ներկայացրեց ՇԽ անդամ Լ. Ավագյանի՝ գրավոր հրաժարակի դիմումը ՇԽ անդամությունից, ինչպես նաև հաջորդիվ անդամի թեկնածու Հ. Բալայանի գրավոր հրաժարականը՝ ՇԽ թափուր պաշտոնի համալրման կապակցությամբ: Այնուհետև, նախագահողը ներկայացրեց ՇԽ 2008թ. սեպտեմբերի 29-ի ընտրության արդյունքում առավելագույն ձայներ հավաքած հաջորդիվ անդամ Ժ. Կարապետյանին: Համաձայն ՇԽ ընտրական Կարգի և ՇԽ Կանոնակարգի նախագահողն առաջարկեց Ժ. Կարապետյանին ներկայանալ և համալրել ՇԽ-ի կազմը, ինչին առարկություններ չեղան: Ժ. Կարապետյանը նշեց, որ նախագահում է «Արդարություն» երիտասարդական ՀԿ-ը, որի հիմնական նպատակը երիտասարդներին անվճար իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն ցուցաբերելն է:

ՇԽ անդամները շնորհավորեցին նորընտիր անդամին խորհրդին անդամակցելու կապակցությամբ:

### **Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ**

Նախագահողն առաջարկեց ՇԽ անդամներին ներկայացնել իրենց կարծիքները, մոտեցումները օրակարգի երկրորդ՝ «Կառավարման խորհրդի 5-րդ պատվիրակի համալրում և հաստատում» հարցի վերաբերյալ:

ՇԽ անդամ Տ. Ղազարյանը կարծիք հայտնեց, որ համաձայն ՀՄՀ-Հայաստանի ներկայացված իրավական տեղեկանքի՝ կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր ոք, ով հանդիսանում է հողի սեփականատեր (գյուղական վայրերում), գտնվում է ուղիղ շահերի բախման մեջ ծրագրի հետ, ինչը վերաբերում է նաև ԿԽ անդամ Կառավարության անդամներին: Տ. Ղազարյանը մտահոգություն հայտնեց այն մասին, որ ՋՕԸ-երը հնարավորություն չեն ունենա մասնակցել ծրագրի վերահսկման գործընթացին, որը կհանգեցնի նրան, որ ՋՕԸ-երն իրավունք չեն ունենա մասնակցել ՇԽ և ԿԽ աշխատանքներին:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Ա. Հովսեփյանը մեկնաբանեց ՇԽ անդամ Տ. Ղազարյանի հարցադրումները, մասնավորապես նշեց, որ «ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում» ծրագրի ուղղակի շահառուներն են ՋՕԸ-երը և Ջրառ-ը, ինչը նշանակում է, որ վերջիններիս ղեկավար աշխատակազմը գտնվում է ուղղակի շահերի բախման մեջ Կառավարման խորհրդին անդամակցելու պարագայում: Այս տեսանկյունից պետք է բխի մնացած այլ հարցերի կանոնակարգումը և կարգավորումը:

ՇԽ անդամ Հ. Ջավադյանը հարց բարձրացրեց, թե ինչ կլինի այն դեպքում, եթե ՇԽ անդամ Տ. Ղազարյանը չհրաժարվի իր ԿԽ անդամությունից, ինչին Ա. Հովսեփյանը պատասխանեց, որ քանի դեռ կանոնակարգված և սահմանված չէ «շահերի բախման» հետ կապված հարցերը, ՀՄՀ-Հայաստանը հենվում է առկա փաստաթղթերի և մինչ այժմ ստեղծված նախադեպերի վրա:

ՇԽ անդամ Տ. Ղազարյանը հարց բարձրացրեց այն մասին, թե ինչ է ենթադրում ՇԽ-ի կողմից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տեղեկանքի ի գիտություն ընդունելը: Հարցի վերաբերյալ նիստի նախագահողը նշեց, որ ՇԽ-ը նախ և առաջ ի գիտություն է ընդունում նախորդ նիստի արձանագրությունը, որտեղ ասվում է, որ Տ. Ղազարյանը հրաժարվում է իր ԿԽ անդամությունից: Տ. Ղազարյանը նշեց, որ ինքը համաձայն չէ արձանագրության հետ և կարծում է, որ իր խոսքը հնչել է այլ կերպ:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ-Գ-Տ Արա Հովսեփյանն առաջարկեց մինչև ԿԽ նոր պատվիրակի ընտրությունը ստեղծել աշխատանքային խումբ, որը կկազմի «շահերի բախման» դեպքերի կանոնակարգային կետերը և կներկայացնի ՇԽ հաստատման, որից հետո միայն համարել ԿԽ թափուր անդամի տեղը՝ հետագայում հակասություններից խուսափելու նպատակով: ՇԽ անդամ Հ. Ջավադյանը միացավ Ա. Հովսեփյանի կողմից ներկայացված առաջարկությանը:

ՇԽ անդամ Ա. Սաքունցը հարց բարձրացրեց, թե արդյոք ՇԽ Կանոնակարգում ամրագրված որևէ կետ կարող է հակասել ՀՄՀ-Հայաստանի Համաձայնագրին և եթե այո, ինչ քայլեր կհետևեն ՀՄՀ-Հայաստանի կողմից: Հարցի կապակցությամբ հանդես եկավ ՇԽ անդամ Ա. Ոսկանյանը և կարծիք հայտնեց, որ ՇԽ գործունեությունը միանշանակորեն պետք է համահունչ լինի և բխի ՀՄՀ-Հայաստան ծրագրի բոլոր փաստաթղթերից: Միևնույն ժամանակ, նա մտահոգություն հայտնեց այն մասին, որ «շահերի բախման» հարցերը կարող են հանգեցնել նրան, որ ագրարային ոլորտի կազմակերպությունները և մասնագետները դուրս կմնան ՀՄՀ-Հայաստանի մասնակցային գործընթացից, ինչը ծրագրի շահերից չի բխում:

ՇԽ անդամ Ս. Մարտիրոսյանը ներկայացրեց իր դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ. նախ, նա հարցրեց Տ. Ղազարյանին, թե ովն է ավելի նախընտրելի՝ ԿԽ անդամությունը, թե «Շենիկ» ՋՕԸ-ի շահառու լինելը, երկրորդը՝ նա նշեց, որ արձանագրվել էր, որ Տ. Ղազարյանը հրաժարվում է իր ԿԽ անդամությունից, եթե շահերի բախումն անխուսափելի է. ՀՄՀ-Հայաստանի իրավաբանը պնդում է, որ դա այդպես է, ինչին բխում է, որ հարցը ՇԽ-ի համար փակված է:

ՇԽ անդամ Տ. Ղազարյանը հանդես եկավ հայտարարությամբ, որում ասվում էր, որ այս պարագայում, ինքը բացարձակապես չի տեսնում շահերի բախում. նշեց, որ պատրաստ է մանրամասն քննարկել շահերի բախման հարցերը և կարծում է, որ գործընթացը պետք է սկսել Կառավարության անդամներից: Տ. Ղազարյանն առաջարկեց նաև քննարկումներից հրավիրել ՇԽ ընտրություններին մասնակցած ՀԿ-ների ներկայացուցիչներին:

Վերջում, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ-Գ-Տ Արա Հովսեփյանն ամփոփեց ծավալված քննարկումները, մասնավորապես, նշեց, որ հարցի կապակցությամբ ՊՈԱԿ-ը իր դիրքորոշումն արդեն հայտնել է՝ հիմնվելով Համաձայնագրի, Կանոնակարգի և մինչ այժմ գրանցված դեպքերի և որոշումների վրա և չունենալով փաստաթղթային որևէ կանոնակարգում: Այնուամենայնիվ, ՊՈԱԿ-ը պատրաստ է անցկացնել քննարկումներ՝ նպատակաուղղված շահերի բախման հարցերի ձևակերպմանը և կանոնակարգմանը: Ա. Հովսեփյանն առաջարկեց ՀՄՀ-Հայաստանի իրավաբանական աջակցությունը և ավելացրեց, որ ի վերջո, կարելի է որոշել, որ կանոնակարգային այդ հարցերի հաստատումը ՇԽ-ում անցնի միաձայն, որպեսզի բոլոր անդամները դառնան գրված հարցերի պատասխանատուն և սեփականատերը: Անդրադառնալով Ա. Սաքունցի կողմից առաջ քաշված մտահոգությանը՝ Ա. Հովսեփյանը նշեց, որ կանոնակարգային քննարկումների և որոշումների կայացման գործընթացում ՀՄՀ-Հայաստանի և ՀՄԿ-ի իրավաբանների հստակ դիրքորոշումը պարտադիր

է, ինչը և կբացառի Համաձայնագրի և ՀՄՀ որևէ փաստաթղթին հակասող կետի առկայությունը:

Նախագահողն առաջարկեց ՇԽ անդամներին քվեարկել 5 հոգուց բաղկացած ՇԽ աշխատանքային խումբ ստեղծելու Ա. Հովսեփյանի առաջարկության վերաբերյալ. առաջարկությունը հաստատվեց միաձայն:

Նախագահողը հավելեց, որ ՀՄՀ-Հայաստանի և ՀՄԿ-ի մասնակցությունն աշխատանքային խմբի աշխատանքներին ցանկալի է, ինչին ՇԽ անդամները տվեցին իրենց հավանությունը:

ՇԽ հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրվեցին աշխատանքային խմբում ներգրավվելու նպատակով և հաստատվեցին միաձայն`

Ժ. Կարապետյան, Լ. Բարսեղյան, Ս. Մարտիրոսյան, Վ. Համբարձումյան և Տ. Ղազարյան:

### **Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ**

#### **1. ԿԽ և ՇԽ համագործակցության հարցեր**

ՇԽ անդամ Կ. Նազարյանը խոսեց Կառավարման խորհրդի և Շահառուների խորհրդի երկխոսության, համատեղ ծրագրեր իրականացնելու մասին, մասնավորապես, ներկաների ուշադրությունը հրավիրեց ՇԽ նախորդ նիստին բարձրացված այն առաջարկությանը, որը վերաբերում էր առաջիկա ՇԽ նիստին ՀՀ Վարչապետ Տ. Սարգսյանին հրավիրելու հետ: Կ. Նազարյանն առաջարկեց ձևակերպել այն հարցերը, որոնք կբարձրացվեն և կքննարկվեն ՀՀ բարձրաստիճան պաշտոնյանների և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Կ. Նազարյանն իր կողմից առանձնացրեց հետևյալ հարցադրումները`

- շահերի բախման հարցերի վերհանում և քննարկում,
- ՀՄՀ-Հայաստան ծրագրի գումարային ասպեկտի քննարկում, մասնավորապես, դոլարի արժեզրկման և թանկացումների արդուներում դուրս մնացած ծրագրերի իրականացման հարցերը:

ՇԽ անդամ Ա. Մաքունցն առաջարկեց հանդիպմանը վերհանել Հայաստանում քաղաքական և ժողովրդավարության իրավիճակի հետ կապված հարցերը:

ՇԽ անդամ Ա. Ոսկանյանը ցանկություն հայտնեց Վարչապետի հետ քննարկել ծրագրի ուղղությամբ տարվող ՀՀ քաղաքականությանն առնչվող հարցադրումներ, ինչպես նաև լիարժեք տեղեկատվության ապահովման հարցը:

ՇԽ անդամ Ս. Մարտիրոսյանն առանձնացրեց հետևյալ կարևոր հարցերը`

- ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացումը ՀՀ տնտեսական զարգացման համատեքստում և ՀՀ Կառավարության ծրագրի համատեքստում,
- ծրագրի իրականացման ներկա ընթացքը, զարգացումները, առկա խոչընդոտները և այլն (հաշվի առնելով երեք ՇԽ անդամների կողմից ներկայացված հայտարարությունը),
- ծրագրի շարունակության հնարավորությունները,
- ծրագրի իրականացման նախապայմանների շրջանակներում առկա բնապահպանական խնդիրները (հաշվի առնելով երեք ՇԽ անդամների և Բնապահպանական դիտորդի կողմից համապատասխան հայտարարությունը):

ՇԽ անդամ Հ. Ջավադյանն արտահայտեց իր մտահոգությունն այն մասին, որ վերոնշյալ առաջարկությունները մասնակի են առնչվում ՀՄՀ-Հայաստանին և առաջարկեց չշտապել և մանրամասն քննարկել հանդիպման օրակարգը` ներկայացնել այնպիսի խնդիրներ, որոնք գտնվում են ծրագրի շրջանակներում և հրատապ են: ՇԽ անդամ Վ. Սողոմոնյանը նույնպես միացավ Հ. Ջավադյանի կարծիքին և առաջարկեց չշտապել հանդիպման անցկացման հետ:

ՇԽ անդամներ Ս. Մարտիրոսյանը և Կ. Նազարյանը հորդորեցին ՇԽ անդամներին չհետաձգել ՇԽ այս կամ այն նախաձեռնության իրականացումը և առաջարկեցին հետամուտ լինել կոնկրետ այս հանդիպման անցկացմանը:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանն առաջարկեց ԿԽ պատվիրակներին առաջիկա Կառավարման խորհրդի նիստի օրակարգի այլ հարցերում ներկայացնել տեղեկատվություն ՇԽ-ի գործունեության վերաբերյալ (համաձայն ԿԽ մայիսի 26-ի որոշման) և մինևույն ժամանակ, հրավիրել ԿԽ նախագահ, ՀՀ Վարչապետ Տ. Մարգարյանին համատեղ հանդիպման և քննարկման:

Նախագահողն ամփոփեց բոլոր առաջարկությունները և առաջարկեց ՇԽ անդամներին քվեարկել և որոշում կայացնել հետևյալ կետերի վերաբերյալ՝

1. ՇԽ անդամներն առաջիկայում կներկայացնեն ՀՀ Վարչապետի հետ հանդիպման օրակարգի վերաբերյալ իրենց բոլոր առաջարկությունները և հարցադրումները,
2. ԿԽ պատվիրակներն կամփոփեն բոլոր առաջարկությունները և մոտավորապես 5 հարցից բաղկացած օրակարգի նախագիծը ներկայացնեն ԿԽ առաջիկա նիստին, որով կհրավիրեն համապատասխան ԿԽ անդամներին ՇԽ-ի հետ հանդիպման:

Վերոնշյալ առաջարկությունը հաստատվեց միաձայն:

## **2. Շահերի բախումը՝ Կառավարման խորհրդի անդամների համար**

ՇԽ անդամ Ա. Սաքունցը խոսեց այն մասին, որ հաճախ Կառավարության անդամների շահերի բախման հնարավոր դեպքերը չեն դիտարկվում և կանխարգելվում և առաջարկեց ՇԽ անդամներին համապատասխան գրությամբ հանդես գալ, որով ՀՀ Կառավարությանը կառաջարկվի մշակել համապատասխան փաստաթուղթ՝ ԿԽ անդամ Կառավարության անդամների ՀՄՀ-Հայաստան ծրագրի հետ կապված շահերի բախման դրույթները սահմանելու նպատակով:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Հովսեփյանն առաջարկեց, մինչև առաջարկության վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելը, պարզել, թե արդյոք մնան փաստաթուղթ արդեն իսկ ընդունված չէ Կառավարության կողմից: ՇԽ անդամները համաձայնեցին:

## **3. Կարգապահական հարցեր**

ՇԽ անդամները որոշեցին առաջիկայում զգոն լինել հաճախ բացակայող անդամների՝ ՇԽ միջոցառումներին մասնակցության առումով և համապատասխան քայլեր ձեռնարկել:

## **4. Բնապահպանական հարցեր**

Բնապահպանական դիտորդ Կ. Դանիելյանը ներկայացրեց մի շարք բնապահպանական հիմնախնդիրներ և ՇԽ անդամներին հորդորեց որևէ կերպ արձագանքել դրանց, հատկապես, ծրագրի իրականացման նախապայմանների համատեքստում:

*Նախագահող՝*

*Ա. Հովհաննիսյան*

*Քարտուղար՝*

*Վ. Գրիգորյան*

*2-րդ հունիսի, 2008*